

Ռեկտեմբերի 1. ՁԻԱՅ-ի դեմ պայքարի համաշխարհային օր

Սկսած 1988թ.-ից ամեն տարի դեկտեմբերի 1-ը ողջ աշխարհում նշվում է իբրև ՁԻԱՅ-ի դեմ պայքարի համաշխարհային օր: Այն անցկացվում է ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի խնդրին լայն հասարակության ուշադրությունը հրավիրելու նպատակով:

ՄԻԱՎ վարակի համաճարակն ազդում է անհատի և ողջ հասարակության կյանքի տարբեր ոլորտների վրա, և համապատասխանաբար համաճարակին հակազդումը պետք է լինի բազմաոլորտային: Սակայն ցանկացած բազմակողմանի խնդրի լուծման մեջ միշտ կան առաջնահերթ ուղղություններ, և դրանք ժամանակի ընթացքում փոփոխվում են: Այդ պատճառով ամեն տարի դեկտեմբերի 1-ն անցկացվում է տարբեր կարգախոսներով, որոնք արտացոլում են ընթացիկ ժամանակի կենսական հարցերը: Այս տարի ՁԻԱՅ-ի դեմ պայքարի համաշխարհային օրն անցկացվում է «Համընդհանուր հասանելիությունը և մարդու իրավունքները» կարգախոսով:

Առաջին անգամ արձանագրվելով 1981թ.-ին ԱՄՆ-ում, այսօր ՄԻԱՎ վարակը տարածվել է բոլոր մայրցամաքներում և աշխարհի բոլոր երկրներում՝ վերաճելով գլոբալ համաճարակի: 2008թ. դեկտեմբերի դրությամբ, աշխարհում արդեն ապրում էր մոտ 33,4 մլն ՄԻԱՎ վարակ ունեցող մարդ:

ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի խնդիրն արդիական է նաև մեր հանրապետության համար: Հայաստանի Հանրապետությունում մարդու ինունային անբավարարության վիրուսով վարակվածության դեպքերի արձանագրումը սկսվել է 1988 թվականից:

1988թ. մինչև 2009թ. դեկտեմբերի 1-ը ՀՀ-ում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 808 դեպք ՀՀ քաղաքացիների շրջանում, որոնցից 134-ը՝ 2009թ. ընթացքում: ՄԻԱՎ վարակով հիվանդների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 590 մարդ (73%), իգական սեռի ներկայացուցիչների մոտ արձանագրվել է վարակի 218 դեպք (27%): ՄԻԱՎ վարակի 16 դեպք (2%) է արձանագրվել երեխաների մոտ: ՄԻԱՎ-ով վարակվածների 59,5%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի փոխանցման հիմնական ուղիներն են հետերոսեքսուալ ճանապարհը (50%) և թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակումը (41,2%): Սրանցից բացի, Հայաստանում արձանագրվել են մորից երեխային, արյան և հոմոսեքսուալ ճանապարհներով ՄԻԱՎ վարակի փոխանցման դեպքեր:

ՄԻԱՎ վարակով հիվանդներից 371-ի մոտ (կին՝ 85, երեխա՝ 8) ախտորոշվել է ՁԻԱՅ, ընդ որում 78-ի մոտ՝ 2009թ. ընթացքում: Համաճարակի սկզբից գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդների մահվան 200 դեպք: Մահացածների թվում կան 33 կին և 4 երեխա:

Թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով բոլոր վարակվածները տղամարդիկ են, ընդ որում՝ նրանց մեծամասնությունը ժամանակավոր բնակվել և, հավանաբար, ՄԻԱՎ-ով վարակվել է ՌԴ-ում ու Ուկրաինայում: Բացի այդ, բոլոր ՄԻԱՎ վարակով հիվանդ տղամարդկանց մեծամասնությունը (57%) նույնպես թմրամիջոցների ներարկային օգտագործող է, իսկ գրեթե բոլոր կանայք վարակվել են սեռական ճանապարհով (98%):

ՄԻԱՎ վարակի դեպքերի առավելագույն թիվն արձանագրվել է մայրաքաղաք Երևանում՝ 352 դեպք, որը կազմում է բոլոր գրանցված դեպքերի 43,6%-ը: ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի թվով երկրորդ տեղում Շիրակի մարզն է՝ 10,4%:

ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի իրավիճակի գնահատումը վկայում է, որ հաշվարկային տվյալներով հանրապետությունում կա ՄԻԱՎ վարակ ունեցող 2300 մարդ:

Ընդհանուր առմամբ վերջին տարիներին նկատվում է արձանագրվող դեպքերի թվի աճ: Դա պայմանավորված է լաբորատոր ախտորոշման հնարավորությունների ընդլայնմամբ և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների հասանելիության մեծացմամբ, նաև ՄԻԱՎ-ի վերաբերյալ կամավոր խորհրդատվության և հետազոտության (ԿԽՀ) համակարգի ստեղծմամբ: Արդյունքում բարելավվել է ՄԻԱՎ վարակի հայտնաբերումը: Մինչ ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ազգային ծրագրի իրականացումը՝ 2002թ. ՀՀ-ում գործում էր ընդամենը 3 ԿԽՀ կետ (ոչ մի կետ կանանց կոնսուլտացիաներում), ինչը սահմանափակում էր խորհրդատվություն ստանալու և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտվելու բնակչության հնարավորությունը: Ներկայումս ՀՀ տարածքում գործում է 155 ԿԽՀ կետ, որոնցից 79-ը՝ կանանց կոնսուլտացիաներում: 2004թ. ընթացքում հետազոտվել է 24 244 մարդ, որոնցից 49-ի մոտ ախտորոշվել է ՄԻԱՎ վարակ, 2008թ.-ին հետազոտված 71510 (2,9 անգամ ավելի) մարդկանցից 136-ի մոտ է ախտորոշվել ՄԻԱՎ վարակ: 2009թ. երեք եռամսյակի ընթացքում հետազոտվել է 53 297 մարդ, որոնցից 111-ի մոտ ախտորոշվել է ՄԻԱՎ վարակ: Արձանագրվող դեպքերի թիվն աճել է նաև այն պատճառով, որ վերջին տարիներին ավելացել է արդեն իսկ ՄԻԱՎ վարակ ախտորոշումով և հիվանդության կլինիկական ախտանշաններով մեր քաղաքացիների հետհոսքն ԱՊՀ երկրներից դեպի Հայաստան: Արձանագրված ՁԻԱՅ-ի դեպքերի թվի աճը պայմանավորված է ՁԻԱՅ-ի և ՁԻԱՅ-ինդիկատորային հիվանդությունների լաբորատոր ախտորոշման հնարավորությունների ընդլայնմամբ: ՁԻԱՅ-ի ախտորոշման բարելավումը պայմանավորված է նաև բուժաշխատողների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի վերաբերյալ գիտելիքների մակարդակի աճով՝ շնորհիվ ՁԻԱՅ-ի

կանխարգելման հանրապետական կենտրոնի (ՉԻԱՅ-ի ԿՅԿ) կողմից անցկացված սեմինար-վարժանքների:

Վերջին տարիներին կտրուկ աճել է հղիների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների թիվը, ինչը ևս պայմանավորված է հետազոտությունների հասանելիության մեծացմամբ: Այսպես, եթե 2004թ. հետազոտվել է 3219 (ծնունդների թիվը՝ 37520), հղի, ապա 2008թ. ընթացքում հետազոտվել է 40067 հղի (ծնունդների թիվը՝ 41454), ինչը մոտ 12,4 անգամ ավելի է 2004թ. հետազոտված հղիների թվից: 2009թ. երեք եռամսյակի ընթացքում հետազոտվել է 29947 հղի: Հետազոտությունների քանակի մեծացման հետ մեկտեղ բարելավվել է հղիների շրջանում ՄԻԱՎ վարակի հայտնաբերումը. եթե 2000-2004թթ. հղի կանանց շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 3 դեպք, ապա 2005թ.-ից մինչև 2009թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում արձանագրվել է 35 դեպք, ինչը հնարավորություն է տվել իրականացնել մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում և էապես նվազեցնել նորածնի վարակվելու հավանականությունը:

ՄԻԱՎ վարակի կլինիկահամաճարակաբանական առանձնահատկությունների պատճառով հնարավոր չէ միայն գրանցված դեպքերի հիման վրա դատել համաճարակի զարգացման միտումների մասին: Հիվանդությունն ունի երկարատև՝ 8-10 տարի շարունակվող թաքնված շրջան, որի ընթացքում վարակված մարդը գործնականում առողջ է լինում, չի ունենում հիվանդության որևէ նշանակալի դրսևորում, հետևաբար կարող է չհիմնալ իր վարակված լինելու մասին: Արտաքինից ևս հնարավոր չէ դատել մարդու ՄԻԱՎ-ով վարակված լինել-չլինելու մասին: Օրգանիզմում ՄԻԱՎ-ի առկայությունը հաստատելու միակ ուղին լաբորատոր հետազոտություն անցնելն է: Ահա թե ինչու ՄԻԱՎ-ի տարածվածության իրական մակարդակը բացահայտելու, համաճարակի զարգացման միտումները պարզելու համար պարբերաբար իրականացվում են կենսաբանական և վարքագծային հետազոտություններ: Դրանք հնարավորություն են տալիս ոչ միայն բացահայտել բնակչության տարբեր խմբերում ՄԻԱՎ-ի տարածվածությունը, այլև պարզել ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը և ՄԻԱՎ-ի տարածմանը նպաստող վարքագծային գործոնները, նաև գնահատել իրականացված կանխարգելիչ միջոցառումների արդյունավետությունը: Համեմատելով վերջին տարիներին կատարված հետազոտությունների տվյալները՝ կարելի է փաստել, որ մեր երկրում տեղի է ունեցել թե՛ կենսաբանական, թե՛ վարքագծային ցուցանիշների բարելավում: Այսպես, ՄԻԱՎ-ի տարածվածությունը հիմնական խոցելի խմբում՝ թմրամիջոցների ներարկային օգտագործողների շրջանում 2005թ. 9,3%-ից նվազել է մինչև 6,8%՝ 2007թ.-ին, բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակի որոշակի աճ և ռիսկային վարքագծի դրսևորումների նվազում: Այս դրական տեղաշարժերը վկայում են բնակչության տարբեր խմբերում իրականացվող ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխարգելման ծրագրերի արդյունավետության մասին, իսկ արդյունավետ կանխարգելումը բուժման, խնամքի և աջակցության համար պահանջվող միլիարդավոր դրամների տնտեսում է: Այսպես, համաձայն ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի միացյալ ծրագրի միջազգային փորձագետի գնահատականի ԹՆՕ-ների շրջանում միայն 2004-2005թթ. կանխարգելվել է թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով և զուգընկերներին սեռական ճանապարհով ՄԻԱՎ-ի փոխանցման 285 դեպք, ինչը նշանակում է, որ տնտեսվել է նրանց բուժման, խնամքի և աջակցության համար անհրաժեշտ հսկայական՝ տարեկան ավելի քան 500 մլն դրամ գումար, և սա միայն մեկ խոցելի խմբում, ընդամենը 2 տարվա ընթացքում: Եթե սրան հավելենք նաև այն, որ համաձայն միջազգային փորձագետների գնահատման, 2005-2007թթ. կանխարգելվել է ՄԻԱՎ-ի փոխանցման 376 դեպք կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց և 664 դեպք՝ տղամարդու հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդկանց շրջանում, ապա միանգամայն ակնառու կդառնա, որ տնտեսվել են միլիարդավոր դրամներ:

ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի համաճարակը վերաճել է գլոբալ ճգնաժամի, ինչն առաջացրել է միջազգային հանրության լուրջ մտահոգությունը: Այդ մտահոգության վառ ապացույցն են ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի հարցերով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հատուկ նիստերի անցկացումը և միջազգային հանրությանն ուղղված ՄԱԿ-ի կոչերն ընդլայնելու միջոցառումները և միավորելու ջանքերը համաճարակին հակազդելու գործում: 2001թ. հունիս ամսին կայացած ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի հարցերով հատուկ նիստի նպատակը ողջ աշխարհը ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի համաճարակի դեմ պայքարի համապարփակ ծրագրի շուրջ համախմբելն էր: Այդ նպատակի համաձայն, ՄԱԿ-ի անդամ պետությունները, դրանց թվում՝ Հայաստանի Հանրապետությունը, ընդունեցին «ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի դեմ պայքարի ոլորտում պարտավորությունների հռչակագիրը», որը դարձավ ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ին հակազդման ոլորտում միջոցառումների առաջին գլոբալ ծրագիրը: Պետությունների ղեկավարների և կառավարությունների ներկայացուցիչների համաձայնությունն աջակցել «ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի դեմ պայքարի ոլորտում պարտավորությունների հռչակագրին»՝ կարևոր իրադարձություն էր ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի համաճարակի տարեգրության մեջ: Դրանով իսկ կառավարություններն ընդունեցին, որ ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի համաճարակի դեմ պայքարում անհրաժեշտ են անհետաձգելի միջոցառումներ:

2006թ.-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին նվիրված մեկ այլ նիստին ընդունված քաղաքական պարտավորությունների հռչակագրով պետությունները նաև պարտավորվել են մինչև 2010թ. ապահովել ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման, բուժման, խնամքի և աջակցության համընդհանուր հասանելիություն:

ՀՀ կառավարությունը՝ կարևորելով ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի դեմ պայքարի խնդիրն ու հետևողական լինելով հռչակագրերի ընդունմամբ ստանձնած պարտավորություններին, հաստատել է 2007-2011թթ. ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին հակազդման ազգային ծրագիրը, որի շրջանակներում ՀՀ-ում իրականացվում են բազմաթիվ կանխարգելիչ ծրագրեր բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում, ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով ապրող մարդկանց տրամադրվում են բուժում, խնամք և աջակցություն, իրականացվում է մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում, տրամադրվում է ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն, ապահովվում է դոնորական արյան անվտանգությունը, կատարվում են ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի ախտորոշմանն ուղղված լաբորատոր հետազոտություններ և այլն: Իրականացվող միջոցառումները համակարգվում են ՀՀ-ում ՁԻԱՅ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովի կողմից:

ՄԻԱՎ վարակն այն հիվանդություններից է, որոնց ձեռքբերումը պայմանավորված է հիմնականում մարդկանց վարքագծով և կենսակերպով: Առաջին հայացքից այս հիվանդության կանխարգելումը բավականին հեշտ կարող է թվալ: Դրա համար անհրաժեշտ է պարզապես դրսևորել անվտանգ վարքագիծ՝ զերծ մնալ թմրամիջոցներ օգտագործելուց, օգտագործել միանվագ օգտագործման ներարկիչներ, ասեղներ, խուսափել պատահական սեռական կապերից կամ դրանց առկայության դեպքում մշտապես պահպանակ օգտագործել, նաև ապահովել բժշկական միջամտությունների անվտանգությունը: Շատերը գիտեն այս մասին, սակայն կյանքը ցույց է տալիս, որ մարդիկ իրենց իմացածը ոչ միշտ են կիրառում գործնականում: Անտեսելով հնարավոր վտանգը, շատերը դրսևորում են ռիսկային, այսինքն՝ ՄԻԱՎ-ով վարակմանը նպաստող վարքագիծ, վտանգելով իրենց և իրենց մտերիմների առողջությունը: Պատճառը հավանաբար այն է, որ մարդկանց մեծամասնությանը ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի վտանգը չափազանց անիրական է թվում՝ անձամբ իրենց հետ այն կապելու համար: Նրանք ոչ միշտ են հետևում անվտանգ վարքագծի կանոններին՝ հուսալով, որ վարակն իրենց կշրջանցի: Այս առումով չափազանց կարևոր է պատասխանատու վարքագծի և առողջ ապրելակերպի ձևավորմանն ուղղված գործունեությունը:

Համաճարակին արդյունավետ հակազդելու համար պակաս կարևոր չեն ՄԻԱՎ-ով ապրողների նկատմամբ հանդուրժողական, հակախտրական վերաբերմունքի ձևավորումը, նաև կանխարգելման միջոցների, բուժման, խնամքի և աջակցության համընդհանուր հասանելիության ապահովումը: Համաշխարհային փորձը վկայում է, որ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավունքների պաշտպանության, նրանց նկատմամբ ոչ խտրական վերաբերմունքի շնորհիվ հնարավոր է նվազեցնել համաճարակի բացասական հետևանքները և կանխել դրա հետագա զարգացումը: Այս առումով կարևոր նշանակություն ունեն իրավական դաշտի բարեփոխումները, որի ուղղությամբ աշխատանքներ են կատարվում նաև ՀՀ-ում: Դրանց արդյունքում տարեսկզբին ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատվել է «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը: Կատարված փոփոխություններն ու լրացումներն ուղղված են մարդու իրավունքների պաշտպանությանն ու ամրապնդմանը: Դրանց շնորհիվ օրենքը համապատասխանեցվել է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործող միջազգային ղեկավարող սկզբունքներին:

Սկսած 2005թ. փետրվարից ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ազգային ծրագրի շրջանակներում ՀՀ-ում իրականացվում է հակառետրովիրուսային (ՀՌՎ) բուժում, բուժման մոնիտորինգ, մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելիչ բուժում և հետկոնտակտային կանխարգելում: 2009թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ այդպիսի բուժում ստանում է ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով 174 հիվանդ, այդ թվում՝ 8 երեխա: Ընդհանուր առմամբ թվով 429 ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդ գտնվում է դիսպանսերային հսկողության ներքո ՀՀ Առողջապահության նախարարության ՁԻԱՅ-ի ԿՀԿ-ում: Ներկայումս ՀՀ-ում ՀՌՎ բուժումը հասանելի է բոլոր դրա կարիքն ունեցողների և նրանց համար, ովքեր տվել են իրենց համաձայնությունը: Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելումը, այդ թվում կանխարգելիչ ՀՌՎ բուժումը, տրամադրվում է ՄԻԱՎ վարակ ունեցող բոլոր հղի կանանց: ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված բոլոր երեխաներն ապահովվում են ՀՌՎ օշարակներով և կաթնախառնուրդներով:

ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելումը պետք է լինի տևական, անընդհատ գործընթաց. այն չի կարող ընդհատվել խոցելի խմբերի համակազմի անընդհատ փոփոխման, մարմնավաճառության, թմրամոլության առկայության, վարքագծի փոփոխման գործընթացի երկարատևության պատճառով: Բազմաթիվ երկրների, նաև Հայաստանի փորձը ցույց է տալիս, որ նպատակաուղղված, համալիր միջոցառումների շնորհիվ, հնարավոր է կասեցնել համաճարակի զարգացումը, հասնել ՄԻԱՎ-ի տարածման տեմպերի նվազեցման և կայունացման: Սակայն այդ միջոցառումների արդյունավետության և ձեռք բերված արդյունքների կայունության գլխավոր նախապայմանը դրանց շարունակականության

ապահովումը, անհրաժեշտ միջոցների առկայությունը և պետական աջակցության ընդլայնումն է: Այս առումով անգնահատելի է ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ին հակազդման ազգային ռազմավարությունների իրագործման հարցում միջազգային կազմակերպությունների աջակցությունը:

Բնակչության տարբեր խմբերում իրականացվող ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի կանխարգելման ծրագրերին մեթոդական օգնություն և օժանդակություն է ցուցաբերում ԶԻԱՅ-ի ԿՅԿ-ն, որն այս տարի նշում է իր հիմնադրման 20-ամյակը: Ի դեպ, ԶԻԱՅ-ի ԿՅԿ-ի 20-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակներում դեկտեմբերի 8-ին անցկացվելու է «ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի արդիական հարցերը» թեմայով հորեյլանական կոնֆերանս, տպագրվելու է կոնֆերանսի նյութերի ժողովածու, որում զետեղված կլինեն տարբեր երկրներից ստացված թվով 120 թեզիս և հոդված: Իր գործունեության շուրջ 20 տարիների և հատկապես վերջին տասնամյակի ընթացքում կենտրոնը հասել է նշանակալի հաջողությունների համրապետությունում ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի կանխարգելման, բնակչության շրջանում ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի վերաբերյալ իրազեկության բարձրացման և անվտանգ վարքագծի ձևավորման գործում: Դրան մեծապես նպաստել է կենտրոնի բարձր որոկավորում ունեցող և փորձառու մասնագետների աշխատանքը:

Կենտրոնն իրականացնում է ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի կանխարգելում և վերջնական ախտորոշում, ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ով հիվանդների դիսպանսերային հսկողություն, ՅՈՒՎ բուժում, օպորտունիստական հիվանդությունների և համավարակների ախտորոշում, բուժում և կանխարգելում, ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն, մոնիտորինգ:

ԶԻԱՅ-ի ԿՅԿ-ի լաբորատոր ախտորոշման բաժնում իրականացվում են ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի և բազմաթիվ այլ վարակների վերաբերյալ լաբորատոր հետազոտություններ: Բաժինը հագեցված է արդիական սարքավորումներով և իր կառուցվածքում ունի մի շարք լաբորատորիաներ՝ ՄԻԱՎ-ի հաստատման, իմունաբանական, կլինիկական և կենսաքիմիական, պոլիմերազային շղթայական ռեակցիայի և վիրուսաբանության լաբորատորիաներ:

Կենտրոնն իրականացնում է նաև բնակչության բժշկական օգնություն և սպասարկում:

ՄԻԱՎ վարակի տարածվածության և ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակի գնահատման, ՄԻԱՎ-ով վարակմանը նպաստող վարքագծային գործոնների բացահայտման նպատակով ազգաբնակչության տարբեր խմբերում պարբերաբար անցկացվում են կենսաբանական և վարքագծային հետազոտություններ:

ԶԻԱՅ-ի ԿՅԿ-ում ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ով հիվանդները և նրանց հարազատները ստանում են հոգեբանասոցիալական և իրավաբանական խորհրդատվություն:

Կենտրոնը բնակչության տարբեր խմբերին տրամադրում է տեղեկատվական-կրթական նյութեր, կազմակերպում և անցկացնում է ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի արդիական խնդիրների վերաբերյալ դասախոսություններ, սեմինարներ և վարժանքներ:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտվելու համար ԶԻԱՅ-ի ԿՅԿ դիմած յուրաքանչյուր մարդու տրամադրվում է նախա- և հետթեստային խորհրդատվություն: Խորհրդատվության ընթացքում այցելուներին տրվում են տեղեկություններ ՄԻԱՎ վարակի կանխարգելման ուղիների և միջոցների մասին, նաև տրամադրվում են կանխարգելման միջոցներ: ԿԻՄ անցած մարդկանց մոտ բարձրանում է ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը և ձևավորվում է ոչ անվտանգ վարքագիծը փոխելու շարժառիթ:

Կենտրոնում գործում է նաև «Վստահության հեռախոս» ծառայությունը: ԶԻԱՅ-ին, անվտանգ սեռական վարքագծին, թմրամոլությանն առնչվող հարցեր կամ խորհրդի կարիք ունեցող յուրաքանչյուր ոք կարող է զանգահարել 61-08-20 հեռախոսահամարով, առանց ներկայանալու դիմել իրեն հուզող հարցով և ստանալ համապատասխան տեղեկություններ ու խորհրդատվություն:

ԶԻԱՅ-ի ԿՅԿ-ն իրականացնում է ոչ միայն գործնական, այլև գիտական գործունեություն: Կենտրոնի աշխատակիցների գիտահետազոտական աշխատանքները տպագրվել են տեղական և արտասահմանյան գիտական ժողովածուներում, ներկայացվել են համաշխարհային և եվրոպական համաժողովների ժամանակ:

ԶԻԱՅ-ի ԿՅԿ-ն ՀՀ առողջապահության ազգային ինստիտուտի համաճարակաբանության ամբիոնի ուսումնական բազան է, որտեղ կլինիկական օրդինատորների համար անցկացվում են «ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի արդիական հարցեր» թեմայով դասընթացներ:

Կենտրոնը հաջողությամբ համագործակցում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության, ՄԱԿ-ի գործակալությունների, ԶԻԱՅ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի և մի շարք այլ միջազգային կազմակերպությունների հետ:

ԶԻԱՅ-ը մարտահրավեր է ոչ միայն ժամանակակից առողջապահությանն ու գիտությանը, այլև համայն մարդկությանը: Ընդունելով այդ մարտահրավերը, ԶԻԱՅ-ի ԿՅԿ-ն շարունակելու է իր նպատակաուղղված աշխատանքը՝ ՄԻԱՎ վարակի համաճարակին արդյունավետ հակազդելու և մեր երկրում ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի դեմ ուղղված ազգային ռազմավարությունների իրագործման ուղղությամբ:

ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի արմատական բուժում, նաև պատվաստանյութ այս հիվանդության դեմ դեռևս չկա: Պայքարի գլխավոր ուղղությունը շարունակում է մնալ կանխարգելումը: Յուրաքանչյուր ոք կարող է

իր ներդրումն ունենալ այդ պայքարում՝ դիմակայելով խարանին և խտրականությանը, հարստացնելով ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ իր գիտելիքները, պարզելով ՄԻԱՎ-ի նկատմամբ սեփական կարգավիճակը: ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի դեմ պայքարի արդյունավետությունը կախված է բոլոր մակարդակներում խնդրի կարևորության գիտակցումից և յուրաքանչյուրիս պատասխանատու վարքագծից:

**ՀՀ ԱՆ ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն
Վստահության հեռ.՝ 61-08-20**